ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИА

АРМАВИРСКИЙ МАРЗ

МУНИЦИПАЛИТЕТ

С. АРЕВАШАТ

հեռ.0231-6-04-34 тел.0231-6-04-34

թիվ 32

« 03 » ԱՊՐԻԼԻ 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի մարտ ամսվա ընդունած որոշումները, կարգադրություն չկա:

Առդիր 4 թերթ:

Արևաշատի համայնքի ղեկավար՝ /Ս.Գևորգյան/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 3306-12
«06» 04 2012 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ

«16» ՄԱՐՏԻ 2012Թ. ԹԻՎ 7

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 9 նիստի N 8-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի 4 ընտանիքների հատկացնել 100,0հազար ՀՀ դրամ համաձայն հավելվածի

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2012թվականի մարտի «16»-ի

գ. Արևաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի
ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ

# ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Մկրտչյան Ռուզաննա 30000
2. Մկրտչյան Լենդրուշ 30000
3. Ստեփանյան Անժելա 20000
4. Տերտերյան Սվետլաննա 20000

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ

«16» ՄԱՐՏԻ 2012Թ. ԹԻՎ 6

## ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետի պահանջները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար Արևաշատի գյուղական համայնքում կազմավորել մեկ ընտրական տեղամաս:
2. Տեղամասի կենտրոնը կազմավորել մշակույթի տան շենքում՝ Երևանյան խճուղի թիվ 16 հասցեում:
3. Պատասխանատու անձ նշանակել մշակույթի տան տնօրեն Զորիկ Սարգսյանին
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2012թվականի մարտի «16»

գ. Արևաշատ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**

**ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2012թ. ԹԻՎ 5-Ն

## ԱՐԵՎԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով`

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ**

1. 2012թ. մայիսի 6-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառները փակցնելու համար Արևաշատ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը`

    1. Երևանյան խճուղի 12 տ. - 4քմ
    2. Երևանյան խճուղի 18 տ. – 4քմ
    3. Երևանյան խճուղի 47 տ. – 5քմ
    4. Երևանյան խճուղի 65 տ. – 5քմ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար` ______ /ստորագրություն/

ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
/անուն, ազգանուն/

2012թվականի մարտի «12»

գ. Արևաշատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ

«05» ՄԱՐՏԻ 2012Թ. ԹԻՎ 4

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի, 17-րդ կետով, 41-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Արևաշատ համայնքի 2012թվականի բյուջեն

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքում Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում կազմակերպելու նպատակով համայնքի 2012թվականի բյուջեի երիտասարդական ծրագրեր հոդվածից հատկացնել 240000(երկու հարյուր քառասուն )հազար դրամ՝ միջոցառում կազմակերպելու և նվերներ գնելու համար:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետին՝ Հ. Ղազարյանին սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳԵՎՈՐԳՅԱՆ

2012թվականի մարտի «05»
գ. Արևաշատ